ԵՂԵԳԻՍ

Բնակավայրի վարչական ղեկավար՝ Արմեն Հակոբյան
Հեռախոս՝ +37477.09 26 80
Բնակչություն՝ 438
Համայնքի վարչական տարածքը կազմում է 1372 հա, որից 157 հա քաղաքացիների սեփականության հողեր են, այդ թվում՝ 62 հա՝ տնամերձ, 95 հա՝ գյուղնշանակության հողեր: Մնացած հողերը համայնքային են և 36 հա պետական սեփականության հողեր(արոտավայրեր, խոտհարքեր): Գյուղը գտնվում է Վայոց ձորի մարզի Եղեգնաձորի տարածաշրջանում: Եղեգնաձոր քաղաքից գտնվում է մոտ 18 կմ հեռավարության վրա, Երևանից՝ 135կմ: Գյուղի հիմնադրման մասին կոնկրետ տեղեկություններ չկան: Այն փռված է Եղեգիս գետի ձախ ափի սարալանջին, ծովի մակարդակից բարձրությունը կազմում է 1640մ: Կլիման մերձարևադարձային է, ձմեռը՝ ցուրտ, ամառը՝ շոգ: Գյուղի զարգացման հեռանկարներն են՝ բնական հրաշալի տեսարանները, պատմամշակութային արժեք ներկայացնող բազմաթիվ վանքերը, եկեղեցիները, խաչքարերը, որոնք խթան կարող են հանդիսանալ տուրիզմի զարգացման համար: Միջնադարյան Եղեգիսը Հայատասանի ամենահարուստ համայքներից է եղել: 13-14 դարերում այն եղել է Օրբելյան իշխանական տոհմի նստավայրը: Գյուղի Սուրբ Աստվածածին մատուռը կառուցվել է 1703թ. ավելի հին եկեղեցու ավերակների վրա, իսկ սուրբ Կարապետ, Զորաց եկեղեցիները 13-րդ դարի կառույցներ են: Հատկանշական է, որ Զորաց եկեղեցում է կատարվել ռազմի դաշտ մեկնող զորքի երդման և օրհնության արարողությունները: Գյուղի հարակից տարածքում հայտնաբերվել է 13-րդ դարի թվագրությամբ հրեական գերեզմանատուն: 15-րդ դարում Լենկ Թեմուրի և այլ զավթողական արշավանքներից, այնուհետև երկրաշարժի հետևանքով ավերվել է քաղաքը : Ավելի ուշ գյուղում բնակություն են հաստատել թուրքալեզու բնակիչներ և այն անվանել՝ <<Ալայազ>>: 1988թ. Սումգայիթյան դեպքերից հետո գյուղը վերաբնակեցվել է Ադրբեջանից բռնագաղթված հայ ընտանիքներով: Վերականգնվել է պատմական Եղեգիս բնակավայրի անվանումը:
Գյուղի բնակչությունը հիմնականում զբաղվում են գյուղատնտեսությամբ և անասնապահությամբ:
Գյուղն ունի դպրոց, բուժկետ, գրադարան: Գյուղում գործում է քարի մշակման արտադրամաս: